ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2021 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2021, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2022- 20.01/ 23
20.01.2022թ.

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների
նախարար Գնել Սանոսյանին

Հարգելի՛ պարոն Սանոսյան,

ՀՀ կառավարության 2017 թ. հուլիսի 13-ի նիստի N 30 արձանագրային որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը, որում ներառված «1.1.5 Տեղեկատվական բազայի տվյալների հիման վրա ՀՀ մարզպետարանների կողմից շուրջօրյա հաստատություններ երեխաների մուտքի կանխարգելման ծրագրերի մշակում և իրականացում» միջոցառման կատարող է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածների նախարարությունը։ Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ խնդրում եմ տեղեկացնել, թե

- ի՞նչ ծրագրեր են մշակվել մարզպետարանների կողմից (խնդրում եմ տրամադրել ծրագրերի օրինակները)
- մշակված ծրագրերից որո՞նք են իրականացվել, ե՞րբ
- քանի՞ երեխա է ծրագրերի իրականացման արդյունքում շարունակել ապրել համայնքում/ընտանիքում (խնդրում եմ երեխաների թիվը տրամադրել ըստ մարզերի)

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5 օրյա ժամկետում: Ուստի, ելնելով վերը նշվածից, խնդրում եմ տեղեկատվություն ստանալու հարցմանս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝
Կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Մ. Թեմուրյան
Էլ. հասցե՝ mtemuryan@hcav.am
Հեռ.՝ 032272268

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

“……” ……. 2022թ. N……

ՀՀ մարզպետներին

Հարգելի՛ գործընկերներ

Խնդրում ենք քննարկել և 7-օրյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն ՀՀ կառավարության 13.07.2017թ. N30 արձանագրային որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրի իրականացման միջոցառումների» ժամանակացույցի 1.1.5 «Տեղեկատվական բազայի տվյալների հիման վրա ՀՀ մարզպետարանների կողմից շուրջօրյա հաստատություններ երեխաների մուտքի կանխարգելման ծրագրերի մշակում և իրականացում» կետի կատարման ընթացքի վերաբերյալ:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

24.01.2022

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

Հարգանքով՝ Signed by: SANOSYAN GNEL 1710830069

Գ. Սանոսյան

Կատարող՝ Անուշ Խուդոյան
Տարածքային կառավարման վարչություն
Հեռ՝ 010515130
Էլ. փոստ՝ a.khudoyan@mta.gov.am